ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

05 մայիսի 2025 թվականի թիվ 884-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՖԻՐՈՒԶԱ ԵՂԻՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ՏԵՂԱԴՐՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննելով քաղաքացի Ֆիրուզա Եղիյանին կառուցապատման իրավունքով պատկանող հողատարածքում /պայմանագիր՝ 02.03.2007թ./ ինքնակամ շինությունների առկայության փաստը պարզեցի. ՀՀ Գեղարքունիքի դատախազությունը 12.04.2025 և 23.04.2025թ. գրություններով տեղեկացնում է, որ քաղաքացի Ֆիրուզա Եղիյանին կառուցապատման իրավունքով պատկանող հողատարածքում առկա են ինքնակամ տեղադրված շինություններ: Ուսումնասիրելով առկա փաստերը՝ պարզվում է, որ քաղաքացին, խախտելով ՀՀ կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի N 896, ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ին 596–Ն որոշումների և «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի պահանջները, իրեն կառուցապատման իրավունքով պատկանող հողատարածքում տեղադրել է ինքնակամ շինություններ: Համաձայն ՀՀ «Քաղաքաշինության օրենսգրքի» 188–րդ հոդվածի 1-ին կետի՝ այդ շինությունները համարվում են ինքնակամ: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42–րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Պահանջել քաղաքացի Ֆիրուզա Եղիյանից /ք. Երևան, Ավանեսովի փ., 12շ., 26 բն. հասցե/ ապամոնտաժելու (քանդել) տարածքում տեղադրված շինությունները երեք ամսվա ընթացքում :
2. Պահանջել քաղաքացուց տարածքում կառուցապատումն իրականացնել ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:
3. Սույն որոշման 1-ին կետի պահանջները չկատարելու դեպքում հարցը լուծել ՀՀ օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան երկու ամսվա ընթացքում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի մայիսի 05
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

05 մայիսի 2025 թվականի թիվ 885-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՅԿ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ ՏԵՂԱԴՐՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննելով քաղաքացի Հայկ Թադևոսյանին կառուցապատման իրավունքով պատկանող հողատարածքում /պայմանագիր՝ 23.05.2006թ./ ինքնակամ շինությունների առկայության փաստը՝ պարզեցի. ՀՀ Գեղարքունիքի դատախազի՝ 12.04.2025թ. և 23.04.2025թ. գրություններով ուսումնասիրվեց քաղաքացու կողմից նախկին կենտրոնական հիվանդանոցի հարևանությամբ իրեն պատկանող հողատարածքում ինքնակամ տեղադրել է շինություններ: Պարզվել է, որ քաղաքացի Հայկ Թադևոսյանի կողմից կառուցապատման իրավունքով պատկանող հողատարածքում շինությունները տեղադրվել են՝ խախտելով ՀՀ կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի N 896, ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ին 596–Ն որոշումների, ՀՀ «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածի պահանջները: Համաձայն ՀՀ «Քաղաքաշինության օրենսգրքի» 188–րդ հոդվածի 1-ին կետի՝ այդ շինությունները հանդիսանում են ինքնակամ շինություններ: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42–րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Պահանջել քաղաքացի Հայկ Թադևոսյանից /ք. Սևան, Ս. Սևանեցու փ., 3 բն. հասցե/ ապամոնտաժելու (քանդել) հողատարածքում տեղադրված ինքնակամ շինությունները երեք ամսվա ընթացքում:
2. Պահանջել քաղաքացուց տարածքում կառուցապատումն իրականացնել ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:
3. Սույն որոշման 1-ին կետի պահանջները չկատարելու դեպքում հարցը լուծել ՀՀ օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել երկու ամսվա ընթացքում ՀՀ վարչական դատարան:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի մայիսի 05
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

05 մայիսի 2025 թվականի թիվ 886-Ա

Ք. ԵՐԵՎԱՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ, 23 ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ ՌՈԶԱ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ ՏԵՂԱԴՐՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննելով քաղաքացի Ռոզա Մկրտչյանին կառուցապատման իրավունքով պատկանող / 19.11.2007թ. N 964-263 պայմանագիր/ հողատարածքում ինքնակամ տեղադրված շինությունների փաստը՝ պարզեցի. ՀՀ Գեղարքունիքի դատախազությունը 12.04.2025թ. և 23.04.2025թ. գրություններով տեղեկացնում է՝ քաղաքացի Ռոզա Մկրտչյանը կառուցապատման իրավունքով իրեն պատկանող հողատարածքում /19.11.2007թ. կնքված պայմանագիր/ ինքնակամ տեղադրել է շինություն: Ուսումնասիրություններով պարզվել է, որ քաղաքացի Ռոզա Մկրտչյանը, խախտելով ՀՀ կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի N 896, ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ին 596–Ն որոշումների, ՀՀ «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածի պահանջները, կառուցապատման իրավունքով իրեն պատկանող հողատարածքում տեղադրել է ինքնակամ շինություններ: Համաձայն ՀՀ «Քաղաքաշինության օրենսգրքի» 188–րդ հոդվածի 1-ին կետի այդ շինությունները հանդիսանում են ինքնակամ: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42–րդ հոդվածի 2-րդ մասի, 1-ին կետի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Պահանջել Ռոզա Մկրտչյանից ապամոնտաժելու (քանդել) հողատարածքում ինքնակամ տեղադրված շինությունները երեք ամսվա ընթացքում:
2. Պահանջել քաղաքացուց տարածքում կառուցապատումն իրականացնել ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:
3. Սույն որոշման 1-ին կետի պահանջները չկատարելու դեպքում հարցը լուծել ՀՀ օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան երկու ամսվա ընթացքում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի մայիսի 05
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

05 մայիսի 2025 թվականի թիվ 887-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 28. 04.2025Թ. N 859-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Սևան համայնքի ղեկավարի՝28.04.2025թ. «Բնակելի նշանակության շինությունները սեփական գույք ճանաչելու մասին» N 859-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի մայիսի 05
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

05 մայիսի 2025 թվականի թիվ 888-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, 10.06.2008թ. ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Էմմա Միքայելյանի դիմումը՝ Լճաշեն համայնքի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի՝ 14. 04. 1991թ. N 10 նիստի որոշմամբ Էմմա Միքայելյանին անհատական բնակելի տան կառուցման համար սեփականաշնորհված 0.0082հա մակերեսով հողատարածքը, հողատարածքում մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինությունները սեփական գույք ճանաչելու մասին, նկատի ունենալով, որ դրանք չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Լճաշեն համայնքի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի՝ 14. 04. 1991թ. N10 նիստի որոշմամբ՝ Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնքում գտնվող, անհատական բնակելի տան կառուցման համար Էմմա Ջիվանի Միքայելյանին / ծնված՝ 03.07.1940թ./ սեփականաշնորհված և իր կողմից փաստացի օգտագործվող 0.06503հա մակերեսով հողատարածքի նկատմամբ ճանաչել Էմմա Միքայելյանի սեփականության իրավունքը:
2. Էմմա Միքայելյանին պատկանող 0.06503հա մակերեսով հողատարածքում 1954-1988թթ. կառուցված 161.48 քմ մակերեսով բնակելի տունը /ներքին մակերեսը՝ 119.34քմ/, 10.70քմ մակերեսով խորդանոցը /ներքին մակերեսը՝ 8.64քմ/, 22.91քմ մակերեսով սան հանգույցը /ներքին մակերեսը՝ 17.07քմ/, 10.07քմ մակերեսով տնտեսական շինությունը /ներքին մակերեսը՝ 7.36քմ/, 7. 53քմ մակերեսով ծածկերը, 16.55քմ մակերեսով հարթակը, 5.01քմ մակերեսով պարիսպը ճանաչել Էմմա Միքայելյանի սեփական գույքը՝ տրամադրելով Սևան համայնք, գ. Լճաշեն, 1-ին փողոց թիվ 26 բնակելի տուն հասցե:
3. Էմմա Միքայելյանին պատկանող 0.06503հա մակերեսով հողատարածքում 2022թ. կառուցված 38.07քմ մակերեսով օժանդակ շինությունը / ներքին մակերեսը՝ 34.55քմ/ ճանաչել ինքնակամ շինություն:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի մայիսի 05
ք.Սևան